

ՎՐԱՑՆՐԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պ Ղ Ն Ձ Ա Հ Ա Ն Ք

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պղնձահանքը Հյուսիսային Հայաստանի ամենանշանավոր քաղկեղտնական կենտրոնն է: Պատմական սկզբնաղբյուրներում այն մի քանի անգամ է հիշատակվում: Կիրակոս Գանձակեցին իվանեի մահվան կապակցությամբ դրում է. «Վախճանեցաւ և Իւանէ, եղբայր Զաքարէի, և թաղեցաւ ի Պղըն-ձաճաճն, ի դուռն եկեղեցւոյն, զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց» վրացի վանս հաստատեացա՞: Այս տեղեկությունը, գրեթե նույնությամբ, կրկնված է մի քանի էջից հետո. «Եւ զի յառաջ քան զսակաւ ժամանակս մեռեալ էր Իւանէ, տարան թաղեցին զնա ի Պղնձաճաճն, զոր իւր շինեալ էր վանս վրաց, առեալ ի հայոց»¹: Այդ հիշատակություններից բանասեր-հնագետները եզրակացրել են, որ Պղնձահանքը, ավելի ճիշտ՝ Պղնձահանքի ս. Աստվածածին եկեղեցին կառուցել է իվանե Երկայնաբազուկը: Միայն ն. Ակինյանն է դիտել, որ «առեալ ի հայոց» վրացի վանս հաստատեաց» ասելով, «իմանալու է անշուշտ այն իմաստով, թե քաղկեղտնիկ հայերու վանք հաստատեաց»²: Իրոք էլ, եթե ի սկզբանե վանքը կառուցվեր իբրև «վրացի վանս», ապա պատմիչը չէր ընդդժի «առեալ ի հայոց» արտահայտությունը³: Նշանակում է՝ արտահայտությունը ուղղակիորեն վերաբերում է վանքին՝ իբրև հոգևոր կենտրոնի և ոչ Պղնձահանք կոչված տեղանքին կամ Ախթալա գյուղին⁴, որ ասել է թե՛ մինչ իվանե Երկայնաբազուկը միաբնակություն դավանող այս հաստատությունը XIII դ. առաջին տասնամյակներում վերածվել է վրացազավան (քաղկեղտնական) միաբանության: Իսկ թե երբ է Պղնձահանքի ս. Աստվածածին վանքը

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մե-լիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 222:

² Նույն տեղում, էջ 238:

³ Ն. Ակինյան, Միմեն Պղնձահանքի և իր թարգմանությունները վրացերենէ, Վիեն-նա, 1951, էջ 4:

⁴ Զտքարյանները Օրբելյանների հալածումից հետո Հյուսիսային Հայաստանի տեղն էին, Թամարի օրոք իրենց իշխանությունը տարածելով նաև Շիրակի ու մի շարք այլ գավառների վրա: Պատմական աղբյուրներում ոչ մի անգամ Զաքարյանների տիրությունը որևէ տարածու-թյան հանդեպ «առեալ ի հայոց» չի դիտվել, և, հասկանալի պատճառներով, չէր էլ կարող: Հայադղի Երկայնաբազուկները որոշ արձանագրություններում նույնիսկ իբրև թագավոր են հոր-շորջվում՝ ազգանվեր ու շինարարական արտակարգ բեղուն գործունեությամբ:

⁵ Պրոֆ. Ծ. Թաղալյալիսն թեև գրում է, որ «По словам армянских историков Вардана Великого, Киракоза Гандзакийского и Степана Орбелиани, Иване, приняв православие, взял у армян местность называемую Пгндзаханк (Медный рудник), и воздвиг там грузинский монастырь», այնուամենայնիվ նկատում է. «Ахтальский монастырь скорее произведение X—XI в., чем XII. Этим не умаляется свидетельство указанных армянских историков» (Е. Такайшвили, Грузинские надписи Ахталы («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXIX, Тифл., 1901, стр. 143—144).

սկզբնապես հիմնադրվել՝ մինչև այժմ ստույգ հայտնի չէ։ Վախուշտի Արքայազնը այստեղի եպիսկոպոսության հիմնադրումը վերագրում է վրաց Վախտանգ Գորգասալ թագավորին (V դ.)⁶, որ, իհարկե, հավաստի լինել չի կարող։ Ս. Զալալյանցը չի անդրադարձել վանքի կառուցման ժամանակի հարցին, բայց իրավացիորեն երկմտանքով գրել է. «Այս տեղի երբեմն եղել է եպիսկոպոսարան յունաց, այլ թէ իսկապէ՞ս յունաց է թէ հայոց՝ չէ յայտըստ որում չիք ճշմարիտ վէպ և կամ արձանագիր. միայն մերձ սորա գոյ մատուռ և խաչ փոքրիկ, գրեալ ի վերայ խաչին՝ Կանգնեցաւ խաչս օգնական Աւագայ, յառաջնորդութեան Համազասպայ, և ի ծինամօղարութեան Պետրէի, ի թուին հայոց Ողբ-ինն»⁷։ Ե. Լալայանը, ինչպես երևում է, Վախուշտի տեղեկությունը իբրեւ իրականություն է ընդունել և եզրակացրել. «...Ախտալի Պըղընձահանքում հին ժամանակից, 5-րդ դարից, կանգնած է եզել եկեղեցի, որի մոտ հետզհետե շինվել են մյուս եկեղեցիները, և ի վերջո ս. Աստվածածին մայր եկեղեցին, հավանականորեն ի վանքի ժամանակ և սրա ջանքով, երբ Թամար թագուհու հաղթական թագավորության միջոցին ճարտարապետությունը դարձյալ սկսել էր ծաղկել»⁸։ Գ. Աղանյանը ևս, որ նախորդների պես այցելել է Պընձահանք, կառուցման ժամանակի վերաբերյալ գրում է. «Ճամարի մեջ ոչ մի հիշատակարան չկա, որից իմացվեր, թե որ գարու և ժամանակի գործ է։ Սակայն մերձակա ուրիշ վանքերի արձանագրություններին նայելով՝ մեզ թվում է թե Ժ դարից հին չէ»⁹։ Պընձահանքի մասին համառոտաբար խոսել են Պ. Իոսելիանին¹⁰, Աղ. Երիցյանը¹¹, Լ. Մելիքսեթ-Քեկը¹², Հ. Ոսկյանը¹³, Ս. Էփրեկյանը¹⁴ և շատ այլոք¹⁵, բայց վանքի կառուցման

6 Ներանից (Իմա՝ Ճոճկանի ձորից—Պ. Մ.) դեպի հյուսիս գտնվում է Ագարակի եկեղեցին (1), ուր [Վախտանգ] Գորգասալն եպիսկոպոս կարգեց (1), որ հետագայում Սոմխիթի մետրապոլիտ և [վրացագավանների] թեմակալը դարձավ, և որի հոտն էին կազմում Խունանը, Գարգաբանը և Բերդուշ գետ[ի ձորը]։ Եկեղեցին գմբեթավոր, մեծակառույց, այժմ կոչվում է Ախտալա, և երեցի տեղաբնիկների շինած է (տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 80։ Բնագիրը տե՛ս ցանցմուծ, ՉԳՄԳՆԻ Երկրագրության և Նավարկության ծովային տնտեսության, 1941, ց. 36)։ Աղ. Երիցյանը բավական հանգամանորեն առարկելով Վախուշտին, մանավանդ V դ. և թեմակալության հարցերում, պնդում է, որ հավաստի Գանձակեցու և Վարդանի տեղեկությունն է՝ ի վանքի օրոք, XIII դ. սկզբում վանքի կառուցված լինելը [А. л. Ерицов], Монастырь Ахтала, „Кавказская старина“, 1872, № 1, стр. 21—28.

7 Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Ա, Տփլիս, 1842, էջ 85։

8 Ե. Լալայան, Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», VII—VIII, Թիֆլիս, 1901, էջ 429։

9 Գ. ա. ք. Աղանյան, Հնից-Նորից (հնախուրական ուղևորություն), «Լուսավ», 1900, Ա, էջ 215։ Երախտավոր հայագետի աչքից, ինչպես երևում է, վրիպել են Վարդանի ու Գանձակեցու տեղեկությունները, այլապես կհիշատակեր։

10 П. Иоселиани, Путевые записки от Тифлиса до Ахталы, Тифлис, 1850, стр. 23—24.

11 А. л. Ерицов, նշվ. աշխ., էջ 20—24։

12 Լ. Մելիքսեթ-Քեկ, «Ինքնակազմեցեալ խոսքեր և խոսքեր Երևանի մասին», Երևան, 1928, ց. 58—59.

13 Հ. Ոսկյան, Գուդարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 2—3։

14 Ս. Էփրեկյան, Բնաշխարհիկ բառարան, Ա, էջ 75։

15 Մի ք. Զամչյան, Պատմութիւն հայոց, հ. III, 1786, էջ 179, 204, 225։ Գ. Ալիշան, Այլարատ, 1890, էջ 259, «Закавказский Вестник», 1850, № 16, 17, 18; «Кавказский календарь», 1852; Д. Г р и м м, Памятники византийской архитектуры..., СПб., 1859.

ստույգ ժամանակը տակավին պարզված չէ: Պղնձահանքի անցյալով հետա-
րըրթրվող մասնագետներին թերևս որոշ ծառայություն կարող է մատուցել
մի արձանագրություն, որ պահպանվել է Ախթալա տանող ճանապարհի մոտ.
Այորում (միկրոտոպոնիմ, վկայում են Ս. Տեր-Ավետիսյանը և Ն. Մելիքսեթ-
Քեկը): Մեջտեղից կոտրված այս խաչքարը, իր արձանագրությամբ, հայտնի
է եղել Ս. Տեր-Ավետիսյանին և Ն. Մելիքսեթ-Քեկին¹⁶, Վերջինս, սակայն, եր-
կու անգամ հրապարակելով տեքստը, մասնավոր քննության առարկա չի դարձ-
րել, Բանն այն է, որ հանգուցյալ Ն. Մելիքսեթ-Քեկը ի վանն Նրկայնաբազու-
կի անվան հետ կապվող Գանձակեցու և Վարդանի հիշատակած Պղնձահանքը
նույնացնում էր Թալառուխ (այժմ՝ Մեղրաձոր) գյուղի մոտ գտնվող վանքի
հետ¹⁷, Նժեհ նա ճշտեր, որ ի վանն ու իր որդին թաղված են միաբնակ հայն-
րից առած և «վրացի վանս» հաստատած մենաստանում, ապա այդ նույնացու-
մը ինքնին կվերանար¹⁸:

Պղնձահանքի (Ախթալայի) ս. Աստվածածին վանքը, ըստ այդ արձանա-
գրությունից մակաբերվող տեղեկության, 1188 թ. կառուցել է Կյուրիկե Ջ-ի
դուստր Մարիամը: Այորի արձանագրության մեջ որոշակի ասվում է. ՆՍ ՄԱ-
ՐԻՍՄ Դ/ՈՒՍՏՐ ԿԻՐԻԿԵ/Ի, ԿԱՆԳՆԵՑԻ Զ/ՊՂՆՁԱԿԱՆ/ԱՅՍ ՀՈՂՀԱ/ՏԻ ՄԲ
ԱՆԱՎԵ/ԻՆՍ, ՈՐՔ ԵՐ/ԿՐՊԱԳԵՔ՝ Զ/ՄԵԶ ՅԱՂԱԿ/ԹՍ ՅԻՇԵՑԵՔ/: ԹՈՒ ՈՂԷ,
ԻՀԱՐԿԵ, ՏՈՒՐԵ աստուածածինս» ասելով առաջին հերթին պետք է հասկանալ
այդ խաչքարը, որին պիտի երկրպագեն, սակայն «Պղնձահանացս հողհատի
սուրբ աստուածածինս» ամբողջական արտահայտությունը իրավունք է տալիս
մտածելու, թե խոսքը վերաբերում է Պղնձահանքի բուն կառույցին՝ ս. Աստ-
վածածին վանքին, այլապես ստիպված պիտի լինենք այդ միջավայրում մեկ

Ակադեմիկոս Ս. Նրեմյանը ժամանակին անդրադարձել է Սմբատ Դավթա որդու
«Ժամանակագրության» ճշգրտության և ողորդության արտահայտությանը (Յ. Յ.-ի Մոդրա-
դեր) և իրավացիորեն նկատել, թե այն պետք է սրբագրել Ֆոտոսնս, որով կունենանք՝
«Էկանգ առավ Մովի կենտրոնում» (ցավով, Յ. Յ.-ի գիտական հրատարակության ժամա-
նակ այս սրբագրությունը դանց է առնել, նախընտրելով և՛ փոփոխության, որ այլևս հատուկ
անուն չէ. տե՛ս Յ. Յ., I, 375), Ս. Նրեմյանը Մովի նույնացնում է Մաթիփոր (resp.
Մովիփոր) գավառի կենտրոն Մովայի հետ, որից հետևում է, թե Հերակ կայսրը այստեղ է քա-
րն խաչ կանգնեցրել և հիմնարկել ս. Աստվածածին եկեղեցին, ավարտել է նրա գմբեթը: Ս. Ն-
րեմյանը, տեղագրական կոմանից ելնելով, կարծում է, թե «այդպիսի հուշարձան կարող է լինել
միայն այժմյան քաղկեդոնական Ախթալա վանքը, հայոց պատմիչների Պղնձահանքը, որի շուրջ
իրոք ավանդություն կա, թե այն հիմնել է Հերակ I [կայսրը]՝ Պարսկաստան կատարած իր
արշավանքի ժամանակ» (С. Т. Еремян, Заметки к тексту „Хропикн Сумбата“, „Из-
вестия“ Арм. ФАН, 1941, № 9, էջ 27—30): Նկատելու է, սակայն, որ այժմյան ս. Աստ-
վածածին եկեղեցին VII դ. սկզբների կառույց չի կարող լինել: Խոսքը կամ նրա տեղում
եղած երբեմնի շինություն է վերաբերում և կամ՝ Մովի անունը կրող բնակավայրին
(վկայված է Մաթուսականի արձանագրության մեջ, տես սուրբ): Տես Ս. Տ. Նրեմյան.
Հայաստանը ըստ «Ալեքսանդրացի», Նրեմյան, 1963, էջ 56—57

¹⁶ Լ. Տեղովից - ծեցու, խոնարհ և մոտ լոմեջի և յարտյու Ֆահրեթին,
Ծղ. Ծղ. Մոմբդի, VII, 1927, թ. 67, թ. 63. Հիմ. Նուրի՝ Վրաց աղբյուրները Հայաստանի
և հայերի մասին, հ. Բ, էջ 58:

¹⁷ Ն. Մելիքսեթ-Քեկի այս դրույթը ընդունել է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, տե՛ս նրա՝
Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Նրեմյան, 1952, էջ 223:

¹⁸ «Պղնձահանք II-ի» (իմա՝ Մեղրաձորի—Թալառուխ—Թեթառուլքի) արձանագրու-
թյունների վերծանությունը կհրապարակենք առանձին:

ուրիշ «Պղնձահանք» տեղանունն ևս փնտրել: «Հողհատ» տերմինի գոյությունը ևս, որ մեր մատենագիտության մեջ առաջին անգամ է վկայվում և չկա Նոր Հայկազյան բառարանում, հանք ունեցող տեղանք է մատնացուցում (հողհատ (հատանել)—հողափոր, հանքափոր նշանակությամբ): Ուստի կարծում ենք, որ խոսքը Պղնձահանքին է վերաբերում¹⁹, այլապես կարելի պիտի լինի մտածել, թե Պղնձահանաց վանքը մինչ այդ արգեն կառուցված էր, և Մարիամը վկայակոչում է այն:

1216 թ. Պղնձահանքն արդեն նշանավոր վանք էր, և իվանեն այնտեղ էր պահում Պոռշ կողմնակալի որդի Վասակ իշխանի ընծայած Օրբելյանների «աստուածընկալ սուրբ խաչը», Ստ. Օրբելյանի ծանոթությամբ՝ «և խաչն կայր ի պահեստի ի Պղնձահանքն»²⁰: Ինքնին հասկանալի է, որ խնդրո առարկա դարձած խաչը մեծ արժեք է ներկայացրել և Պղնձահանքին ի պահպանություն տրվել իբրև կրթական-դավանաբանական նշանավոր կենտրոնի: Եվ իրոք էլ՝ խաչի շուրջ եղած վեճերն ու հավակնություններն այնքան են մեծանում, որ իվանեն Դվինում նախադեպը շունեցող կազմով «դատաստան» է հրավիրում. «Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր, հրամայէր քննել՝ զՌուբայն²¹ և զՄարծուանն, զԻվան Դպին և զՄեմնա Ջաղէլն (տպ. զմեմնաշաղէլն), զմեծ ձղանդիտեղն՝ որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծինամծղաւրն (տպ. զծիրամ ծղաւրն) Վարձէոյ և զծինամծղաւրն (տպ. զծիրամ ծղաւրն) Պղնձահանքն և զմեծ մամթավարն (resp. մամամթավարն) Գարշտէոցն, զԳագեցին, և զՄածնաբերգեցին և այլ բազում դէղեպուրք ևս, և զղատին Տփղեաց և զղատին Անւոյ և զղատին Դւնայ և զանուանի շխն Սուրմարւոյ, ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բշնւոյ և զեպիսկոպոսն Հաղբատայն»²²: Օրբելյանի վկայությունից երևում է, որ Պղնձահանքի առաջնորդը ձղանդիդեղին ու Վարձիայի եպիսկոպոսին հավասար իրավագոր անձնավորություն է: Այստեղից հաստատապես կարելի է եզրակացնել, որ Պղնձահանքը Գուդարքի (Տաշիր-Ձորագետի) քաղկեղոնական վանքերի ու եկեղեցիների կենտրոնն է եղել և դրանով իսկ նշանակալից դեր է խաղացել պատմական-մշակութային կյանքում:

Վերևում առկոչված գրականության մեջ հաճախ է նշվում, որ ս. Աստվածածածինը վրաց վանք է: Երկար ժամանակ բանասիրությանը հայտնի չէր, որ

19 Տարօրինակ չէ, որ Մարիամը Պղնձահանաց հողհատի ս. Աստվածածինը կանգնեցնելու իր շինարարական արձանագրությունը զետեղել է առանձին խաչքարի վրա: Արաս վաղամեծիկի կին Վանենը ևս Սանահնի կամուրջը կառուցելու վերաբերյալ իր արձանագրությունը փորագրել է տվել առանձին խաչքարի վրա:

Այս և ստորև վկայակոչվող հայերեն մյուս արձանագրությունները քաղել ենք գոյություն ունեցող հրատարակություններից, սակայն, օգտվելով վիմագրագետ Ս. Ավագյանի սիրալիրությունից, տեքստերը համեմատեցինք տեղում նրա կատարած վերծանությունների հետ և անհրաժեշտ սրբագրումներ կատարեցինք:

20 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 353: Նույն պատմիչի վկայությամբ՝ երբ իվանն երկայնարազուկին են հանձնվում նրա իսկ պաշարած Ձարեք բերդի բանալիները, վերջինս, այլոժ խնդացեալ և զարմացեալ ընդ սքանչելիսն՝ հրամայէ աւալ ծիկնաւպարին իւրոյ դիւանին՝ Անահթը անուն, զնալ ընդ տեառն Սարգսի (Նորավանքի եպիսկոպոսներից— Պ. Մ.) և տալ զխաչն ի նա ի Պղնձահանքն ուխտի. որ և առ ժամայն կատարեցաւ» (նույն տեղում, էջ 354):

21 Բնագրում ունենք զՌուպակն. սակայն ուսումնասիրությունից պարզվեց, որ Ստ. Օրբելյանի «Պատմության» վկայակոչվող հրատարակության հիմք ձեռագիրը զրչական աղավաղումներ է ունեցել: Զաքարյանների գործակալ Բուրայն հիշված է մի քանի վիմագիր արձանագրություններում, իսկ Թեմառույրում պահպանվել է տապանը՝ վրացերեն տապանագրով:

22 Նույն տեղում, էջ 355:

«վրաց վանք», «վրացի» սახելով պատմական Հայաստանի սահմաններում հաս-
կացել են ոչ միայն իրապես ազգությամբ վրացի, այլ նաև՝ վրացի ըստ դավա-
նության, վրացադավան հայազգի: Այդ գաղտնիքի բանալին ակադեմիկոս Ն.
Մառը հայտնաբերեց հայ քաղկեդոնականությանը նվիրված իր նշանավոր աշ-
խատություն²³, Պղնձահանքի վերաբերմամբ հավաստի է Գանձակեցու տեղե-
կությունը, «զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց» վրացի վանս հաստատեաց»,
բայց այդ չի նշանակում, թե վանքը դարձավ զուտ վրացազգի հոգևորականների
միաբանություն: Ի վանե Երկայնաբազուկն ու նրա որդի Ավագը, Կիրակոս
Գանձակեցու և Վարդանի տեղեկությամբ, թաղված են Պղնձահանքում՝ «ի դու-
ռն եկեղեցոյն» (Ի վանե), «ի գերեզմանի հօր իւրոյ Իւանէի» (Ավագ)²⁴: Երկայ-
նաբազուկների այստեղ հուղարկավորելը ինքնին վկայում է, որ վանքն ու
միաբանությունը օտար չեն զել բուն միջավայրին²⁵: Երբ Զաքարեն դավադրա-
բար սպանվում է Հուլավուի կողմից, Օձունում գտնվող նրա հայրը՝ Շահնշահը,
սյրոժամ լուաւ զգոյժն ... ի նեղսրտութիւն անկեալ՝ ի տրտմութենէն մեռաւ:
Եւ տարեալ թաղեցին զնա ի Քոբայրեւ, զոր առ կի՛նն նոցա ի հայոց»²⁶: Այստե-
ղից պարզիպարզո երևում է, որ Երկայնաբազուկները հուղարկավորվում էին
հայրենական միջավայրում: Ի դեպ, վերոբերյալ արտահայտությունը մի ան-
գամ ևս հաստատում է, որ «առեալ ի հայոցը» իսկապես եղած վանքը կամ ե-
կեղեցին վրացադավան դարձնելուն է վերաբերում, որովհետև Քոբայրը մինչ
այդ վաղուց արդեն հայտնի էր իբրև միաբնակ հաստատություն՝ Կյուրիկե Բ-ի
աղջիկների հոգացողությամբ կառուցված: Պղնձահանքում, աջ խորանում,
պահպանվել է Մովսես քահանայի տապանաքարը (սկզբնապես խաչքար է ե-
ղել)՝ «դՄոսէս քահանա յաղաւթս յիշէսցիք»²⁷:

Վանքից ոչ շատ հեռու պահպանվել է (Ճիշտը՝ եղել է) երկու հայերեն արձանագրություն, որոնք անմիջական առնչություն ունեն առաջնորդանիստ ս. Աստվածածնի հետ: Վանքից ներքև, ավերակ բերդի հանդիման, կա մի եկեղեցի, որի հարավային դռան առջև «Տակայական ու սքանչկերտ հուշարձանի վրա» (Գ. Աղանյան) հետևյալ արձանագրությունը կա. «Թ թվիս ՈՂԴ կա/նգնեցաւ սուրբ տէրո/ւնականս յարեւ/շատուփին/Աւագին եւ ծինա/մծաւուրութեան/ Պետրէի եւ հա/յրապետութեան Հա/մագասպա, ես Յա/կոբ երէց կանգն/եցի զխաչս ի հա/նըգստ/աւան/ի մերո. /զիս /եւ/զամ/ուսի/նի իմ յաղաթ/ս յի/շեցեմք»²⁸, Նթն խաչարձան կանգնեցնողը իր դավանանքով շառնչվեր Պղնձահանքին, ապա «Ժինամծգաւրութեան Պետրէի» արտահայտություն այստեղ չէինք

²³ Н. Марр, Аркауи, монгольское название христиан, в связи с вопросом... СПб., 1905, стр. 17—21; *Մառի հոգի և արարչական հեղինակի ծանոթագրությունները առաջին անգամ* К вопросу об „Аркаунах“ (*ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1964, № 12, էջ 49—59*),

24 Կ. Գ ա Ն ձ ա կ ե ց ի, նշվ. աշխ., էջ 321, 322 և 238; Հմմտ. Վ ա ր դ ա ն, Հաւաքումն պատմութեան..., Վեներտիկ, 1862, էջ 148:

²⁵ Տապանաքարերը այժմ չեն երևում: Աղ. Երիցյանը ենթադրում է, որ Իվանեն ու Ավագը թաղված պետք է լինեն ստորերկրյա մուտքի մոտակայքում (Ա. Լ. Երիցով, նշվ. աշխ., էջ 23), հմտ. Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 430:

26 4. Գ ա ն ձ ա կ ե ք ի, ն Գ Լ. ա ղ իւ., է Գ 393.

27 Հմմտ. Ե. (առաջադան, նշվ. աշխ., էջ 429, Գ. ա. ք. Աղանյան, նշվ. աշխ., էջ 244, Ս. Ավագյանի տեղեկությունքով՝ Ս. Բարխուդարյանի գլխավորած իրենց արշավախումբը տապանադրի տառաձկները նկատի ունենալով, խաջարր մինչև X դ. է համարում,

ունենա. Հաղբատի առաջնորդ, զանգակատան կառուցող, ծագումով Քի քաղաքէն Անտոյ Համազասպի հիշատակութիւնն էլ բավական էր: Ուրեմն ՈՂԴ (—1245) թ. և դրանից առաջ Պղնձահանքում հայ քաղկեդոնականներն են եղել: Որ նման մեկնութիւնը բռնազրոսիկ չէ՝ ապացուցվում է նույն եկեղեցու հարավային գոտան ճակատին գրված խիստ աղավաղ արձանագրութեամբ. «Կամաւ բարեբաւրին Աստուծոյ, յամս աստուածազաւր արքէ (?)/Դէմէտուրա, տուաջնորութեան/ տէր Յովանիսի, ծինամծղաւութեան/ն (Ամոն ?), դեկանաւութեան Աւերապիւրին, /նս մեղ [...]²⁹: Որքան էլ թերի ու աղավաղ, արձանագրութիւնը կարելի է թվագրել. «Արքէ»-ն անշուշտ «արքային» է, իսկ «Դէմէտուրէն» Դեմետրե I-ին՝ Դավիթ Շինարարի որդուն չի կարող վերաբերել (1125-1156), քանի որ այդ շրջանում Պղնձահանքում «ծինամծղաւութեան» լինել չէր կարող. վանքը դեռ չէր հիմնադրված: Տերմինն այստեղ գործածական դարձավ միայն Իվանե Երկայնաբազուկի քաղկեդոնական դառնալուց և Պղնձահանքը Քի հայոց առնելուց հետո, XIII դ. առաջին տասնամյակից ոչ շուտ: Ուրեմն, արձանագրութեան մեջ հիշվող Դեմետրե վրաց թագավոր Դեմետրե II Անձնուրացն է (1271-1289): Իրոք էլ, այդ շրջանում Հաղբատի առաջնորդը Հովհաննեսն էր, վկայված մի քանի արձանագրութիւններում³⁰: Այլևս անկասկած է, որ մեղ հետաքրքրող արձանագրութիւնը գրված է 1271—1289 թթ. արանքում: Հետևաբար այդ թվականներին էլ Պղնձահանքում վրացադավան հայեր էին: Թերևս այս եզրակացութեանը հակասող դիտվի վերոբերյալ տեքստում հիշվող «ծինամծղաւութեան» [Ամոնի] (resp. Սիմոնի ?) և «դեկանաւութեան Աւերապիւրին» տերմինների ու անձնանունների վրացական լինելը (բացի Սիմոնից, եթե այստեղ որևէ անուն կա ու վերականգնումը ճիշտ է)³¹: Բանն այն է, որ XII-XIII դդ. հայ քաղկեդոնականների շրջանում գործածական էին վրացական բառեր ու տերմիններ, հատկապես կապված եկեղեցու հետ: Անիի Տիգրան Հոնենցի արձանագրութեան մեջ ունենք իսաւ (Եսայի), իւուցես (մանդա-

28 Հմմտ. Ե. Լաւայան, նշվ. աշխ., էջ 431, Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 246: Ս. Զաւլյանի մոտ (նշվ. աշխ., էջ 85) արձանագրութիւնը բառացի չի վերծանված, այլ տրված է ընդհանուր բովանդակութիւնը: Մուրավյովը իր ուղեգրութիւններն հրապարակելիս, անկասկած, ուսերեն թարգմանութեամբ բերված արձանագրութեան տեքստը քաղել է (թարգմանի միջոցով) Ս. Զաւլյանի գրքից՝ նորից աղավաղ: Որ իրոք Մուրավյովի աղբյուրը նշված ժամապարհորդութիւնն է, երևում է հետևյալից. Զաւլյանը «ծինամծղաւութեան Պետրէի» բառերի արանքում, իբրև ծանոթութեան ցուցիչ «2» է դրել, տողատակ հղելով, միևնույն Մուրավյովը և նրա թարգմանիչը այդ «2» ընդունել են իբրև 2-րդ (իմա՝ [Երկրորդ] Պետրէի) և ուղղակի թարգմանել «... Петра II» (տես նրա՝ ГРУЗИЯ И АРМЕНИЯ, стр. 315—316): Զաւլյանի բերած տեքստից է օգտվել նաև Ե. Թաղալյալիին՝ ուսերեն թարգմանելով (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 148):

29 Արձանագրութիւն կրող քարը, ինչպես ճիշտ նկատել է Գ. Աղանյանը, փոխված է (Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 247), հավանաբար՝ բուն արձանագրված քարի ընկնելուց կամ ջարդվելուց հետո նորն է տեղադրվել՝ նախորդի վրա դրածի անհաջող ընդօրինակմամբ: Ս. Ավագյանի վերծանութեան մեջ Ամոն (?) անուն չկա: Այդ դեպքում խախտվում է արտահայտութեան բնականոնութիւնը:

30 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 275—277, «Ժամանակադրական ցանկ Հաղբատի առաջնորդների և վանահայրերի»: Յանկը այնուհետև լրացվեց Ն. Մովսիսյանի կողմից (Ն. Մովսիսյան, Հաղբատի առաջնորդները, «Սիւն», 1964, № 8, օգոստոս, էջ 225—229):

31 Այս Սիմոնը (?) չի կարող Սիմեոն Պղնձահանեցիին լինել, որովհետև վերջինս 1248 թ. յայտնի ծերացեալն էր, 60 տարեկան և ապա՝ առաջնորդ չի եղել, այլ քահանա, կրօնավոր:

սուրբա խուցէս — Յանդոժտրոտ իշտցես-օյ³², վիմագիր արձանագրություններում ու պատմիչների մոտ կան ուրիշ բառեր ևս, օրինակ՝ քոր — լյաձօ³³, կրուլ (գրեղ) և ալլն³⁴, նշանակում է «ծինամծղար» և «դեկանաւզ» տերմինների տակ չի կարելի միայն վրացագրի գործիչ հասկանալ, երբ նրանք հայկական աղբյուրներում են գործածված, այլ՝ նրանք վրացադավանությունը, թեև հայ-քաղկեդոնական մենաստաններում վրացի հոգևորականների առկայությունը ամենևին չի բացառվում: Ինչ վերաբերում է Ալեքսանդր անձնանվանը (Ἀλεξάνδρος — Ոսկեբերան), ապա այն գործածական է ոչ միայն երկարընակ հայոց միջավայրում, այլ նաև, կարելի է ասել, Վրաստանի հետ անմիջական երթևեկ ունեցող Հյուսիսային Հայաստանում³⁵:

Ի վերջո, մեր խնդրի լուսաբանման համար նշանակալի է Մաթոսավանքի 1247 թ. հայերեն արձանագրությունը, ուր հիշատակվում են հենց այն անձինք, որոնց մասին խոսեցինք վերևում բերված երկու արձանագրությունների կապակցությամբ: Այստեղ կարդում ենք. «Կաման աստուծոյ եւ Յորդանան շինեցի զեկեղեցիս ի թվ[իւն] ՈՂԶ, իշխանութեան Աւագին, ողորմութեամբ Պրդընձահանացն Աստուածածնին եւ առաջնորդութեամբ Պետրէի եւ տէր Համազասպա: Ուր բերկրագլխի յիշեցեի ի Քրիստոս զծնոգ մեր զծնոցն եւ զամուսին իւր, եւ զՄխիթար, [զ]Մենուս, Զորնաթանայն (?) Յորդանան, Հովմսի. Յոհան, Մարիան...»: Նույն Մաթոսավանքի արեւմտյան մուտքի կողին. «Եւ Պետրէ եւ Համազասպ լնաստատեցաք զՄովսէս եւ Դաւաւանաք (Դաւաւանաք) ժողովուրդ Աստուածածնիս: Ով ու խափանէ՝ դատի ի տեսունէ»³⁶, Ուրեմն իրոք, հանձին «Պետրէ ծինամծղարի», Հորդանանի և Պրդնձահանքի մյուս գործիչների գործ ունենք հայ քաղկեդոնականների հետ³⁷:

³² Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 75—78, Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 58—59, «Երվան...», I, 63:

³³ Տե՛ս H. Mapp, Ани, М.—Л., 1934, стр. 104.

³⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 62: Ի դեպ, վրաց մատենագրության մեջ ևս ի նշան հայադավանության երբեք չգործածվել են նաև հայերեն բառեր՝ ճոճեցորդ (առաջնորդ), լյաձօ (քոր) և այլն:

³⁵ Սանահին Քոթուլում (ՀՍՀՄ Միենիստրների սովետին առընթեր Մշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, Մատենադարան, ձեռ. 3031), պահպանվել է հայոց ՈՂԳ (— 1184 թ.) դրված Զաքարիա և Իվանե Երկայնաբազուկների ընծայականը, որի գրողը՝ Աւգրաւպիլ (նույն լյաձօնորդ) սարկավազն է. «այսպես դրեցաւ Աւգրաւպիլ սարգաւաթի ձեռամբս» (ձեռ. № 3031, էջ 312): Անիի արձանագրություններից մեկում գործածվել է Զոսիմ հայոց մեջ ոչ սովորական անունը, նույնը նաև Հաղարծնում գտնված կաթսայի մակագրության մեջ (տե՛ս H. Mapp, նշվ. աշխ., էջ 104):

³⁶ Հմմտ. Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաղու, 1895, էջ 363, հմմտ. Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 92, հմմտ., Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 68:

³⁷ Ի դեպ, արտաքուստ տարօրինակ է, որ վերևում առկույծ վրացադավան միջավայրի երկու արձանագրություններում էլ Պրդնձահանի ծինամծղարի հետ միաժամանակ, հիշատակվում են Հաղբատի առաջնորդներն ու վանահայրերը (Համաղասպ, Հովհաննես): Ուշագրավ այս երևույթը բացատրվում է նրանով, որ XIII դ. Հաղբատի վանքը եթե քաղկեդոնականների ձեռքըն էլ չէր անցել, ապա նրա նկատմամբ մեծ հանդուրժողականություն էր ցուցաբերում, ինչպես կոսհել են Մառն ու Տոկարսկին և ապացուցել ենք մենք՝ որոշ փաստարկներով: (Պ. Մուրադյան, Վրացերեն արձանագրությունները Հայաստանում, ՀՍՀՄ ԳԱ «Տեղեկագիր», հաս. դիտ., 1966, № 3, էջ 45—46):

Պղնծահանք, յաւիտենից թուականին 3202 (—1248): Աղաչեմ զձեզ, ով եղբարք, դի յոյժ աշխատութեամբ թարմմանեցի. նախ զի ոչ էի արժանի այսպիսի սպասաւորութեան, սակս շաղախեալ գոլ մեղօք. երկրորդ զի յոյժ ծերացեալ էի եւ տկարացեալ յաշաց եւ ի մտաց եւ ի զօրութենէ. զի զՎ ամենիւմ էի: Այլ դի ոչ էր սա քարքմանեալ ի մերս լեզու. եւ սա է մայր աստուածաբանութեան առաջին ...եւ ես յայն սակս քարքմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ...»⁵⁴, Հայ և վրաց մատենագրութեան հանդեպ ցուցաբերած այսպիսի ծանոթութիւնը, հավանաբար, և՛ հարուստ գրադարանի առկայութիւնն է ապացուցում Պղնծահանքում, և՛ արժանավոր կրթօջախի գոյութիւնը:

Պղնծահանքի միաբանները, անշուշտ ի վանհ ծրկայնաբազուկի հովանավորմամբ, շարունակում էին իրենց հայ ճանաչել, իսկ հայերենը՝ «հայ լեզու», Հայաստանը՝ «յերկիրս հայոց», հայ մատենագրութիւնը՝ «մեր լեզու, ...մի պակաս եղիցի յազգէ մերմէ»: Պղնծահանքին ևս, հավատարիմ իր ժամանակի դավանաբանական ըմբռնումներին՝ ս. Աստվածածինը «վանս վրաց» է անվանում⁵⁵:

Պղնծահանքի միաբանները հավասար սիրով են ուսումնասիրել հայկական ու վրացական մատենագրութիւնը, շին մերժել մեկի նվաճումները և շին երկմարտել մյուսը հարստացնելու ազնիվ ձգտման մեջ: Իբրև ապացույց Պղնծահանքի միաբանների՝ նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս եկող մատենագրական եղելութիւնների տեղյակութեան և քաղկեդոնական այլ վանքերի հետ գործակցութեան, կարելի է վկայակոչել հետևյալը. Բեռլինի արքայական գրադարանի № 25 հայերեն ձեռագրում⁵⁶, որ բովանդակում է Հովհան Սինայեցու «Սանդուխթ աստուածային ելիցը» («Կղիմաքս»), 20-րդ գլխի վերջում պահպանվել է հետևյալ հիշատակարանը. «Թարգմանեալ է մինչև աստ ի սրբամիտ կրանաւորէ Սինասէ Սինակեցէ ի Տրապիզոն քաղաք: Իսկ աստուստ՝ ի Սիմէլէոն քահանայէ վրանաւորէ Վրաց բարբառով»⁵⁷: Երևանի Մատենադարանի № 1925 ձեռագրում (էջ 89v) բերված հիշատակարանի երկրորդ մասն է պահպանվել. «Սրբասնեալ կրանաւոր Սիմէոն, թարգմանեցի Խ ճառէն ի վեր, ի վրաց լեզուէն»: Բնական է, որ նույն երկասիրութեան՝ կեսը մեկ և կեսը մյուս թարգմանչի կողմից հայերեն փոխադրվելը (ըստ որում Մինաս Սյունակցայինը՝ հունարենից, Սիմեոնինը՝ վրացերենից) որոշակի պայմանավորվածութիւն է վկայում: Պղնծահանքում ոչ միայն գիտին ինչ է կատարվում հեռավոր Տրապիզոնում, մանավանդ դավանակիցների շրջանում, այլև ուղղակի շարունակում էին նրանց ինչ-ինչ պատճառներով կիսավարտ մնացած գործը:

1582 թ. Իոան գրիչը Ակնի գավառի թի վանս որ կոչի Նորվան, ընդ հովանեաւ ամենասրբուհի աստուածածնի..., վանքն որ կոչի Աթմա, ընդօրինա-

⁵⁴ Տե՛ս ն. Ա կ ի ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 23—24:

⁵⁵ Ի դեպ, «նոր բողոքիք հայկազեան լեզուի» հեղինակները ծանոթանալով հիշատակարանի թի վանս վրաց»-ին, կարծի են, թե այն «թարգմանեալ ի ձեռն Սիմէոնի քահանայի վրացոյ է», որովհետև այն ժամանակ վրացի հայոց համար միայն էթնիկական հասկացողութիւն էր և նրա դավանաբանական (конфессиональный) երանգը դեռ գաղտնիք էր: «նոր բողոքիք...», Վենետիկ, 1836, էջ 18 (2-րդ սյունակ):

⁵⁶ Նկարագրութիւնը տե՛ս Dr. N. Karamianz, Verzeichniss armenischen Handschriften, Berlin, 1888, S. 18 («Die Handschriften—Verzeichnisse Königl. Bibl. zu Berlin»).

⁵⁷ ն. Ա կ ի ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 106:

կում է [«Յունական Շարակնոց»], ավանդելով այս հիշատակարանը. «...սուրբ հայրն մեր պապա Մինասի եւ պապա Սիմոնի թարգմանեալ էր ի վրաց լեզուէ ի մեր լեզու...»⁵⁸։ Այլեւ պարզ է, Պղնձահանքի կրոնավորը գործակցում է Տրապիզոնի Մինասի հետ միանգամայն պատճառաբանված ու պայմանավորված։

Ահա այս նկատի ունենալով ենք մենք ասում, թե Անիի վրացադավանվրացական եկեղեցուց հետո, Պղնձահանքը հայ երկաթնակուլթյան ամենանշանավոր կենտրոնն էր։

«Հունական Շարակնոցի» թարգմանության պարագան էական նշանակություն ունի Պղնձահանքի հետ կապված այլ հարցեր քննելիս։ Ակադեմիկոս Կ. Կեկելիձեի հեղինակավոր ընդհանրացմամբ «...թարգմանական ստեղծագործությունները այս կամ այն գրականության մեջ պատահաբար ու աննպատակ չեն հայտնվում. նրանք կոչված են այն սոցիալական ու մշակութային-պատմական պահանջմունքներով, որ առաջադրում է մտքի տեղական հոսանքը. թարգմանվում է այն, ինչ պահանջում է էական, ամենօրյա անհրաժեշտությունը, թարգմանվում է օտար նյութը, իսկ ընտրությունը կատարում է, թարգմանում ու յուրացնում է ազգային առանձնահատկությունն ու գիտակցությունը, մի խոսքով՝ թարգմանվում է այն, ինչի հանդեպ անհրաժեշտ պահանջ կա...»⁵⁹։

Արդ, «Հունական շարակնոցը» ևս թարգմանվել է գործնական նկատառումով, այսինքն՝ վրացադավան վանքը չի ունեցել քաղկեդոնական խմբագրության ապաշտամանց գիրքը», հետևաբար ծիսակատարության մի մասը գոնե պետք է կատարվեր հունարեն կամ վրացերեն լեզվով (այս դեպքում երկրորդով)։ «Շարակնոցը» հայերեն են թարգմանել, որպեսզի ամբողջ ծիսակատարությունը մայրենի լեզվով լինի՝ հայերեն։ Ն. Ակինյանը իրավացի չպետք է լինի, կարծելով, որ մինչև «Շարակնոցիս» թարգմանությունը «թե Հոռոմոց աշխարհին և թե Վրաստանի մեջ անոնց (հայ-հոռոմների— Պ. Մ.) ծիսակատարությունը հունարեն և վրացերեն լեզվով էր։ Գոնե ծանոթ չեն հայերեն լեզվով ծիսարաններ»⁶⁰։ Ժիշտ է, մինչև XIII դ. սկիզբը հայերենով քաղկեդոնական ծիսական գրականություն ձեռագրերում չկա (մինչև այժմ հայտնի չէ), բայց այդ չի նշանակում, որ չի էլ եղել նկատի պետք է ունենալ, որ հայ երկաթնակների ինքնուրույն ու թարգմանական մատենագրությունից միայն փշրանքներ են պահպանվել⁶¹, որովհետև պաշտոնական եկեղեցին անխնայորեն կարող էր, ինչպես Կադանկատվացին է գրում, սնդուկներով «ի գետն Տրապիզոն»⁶²։ Մինչդեռ հայկական ու հունական աղբյուրներից գիտենք, որ տակավին ս. Սաբայի օրոք (VI դ.), նրա կտակի համաձայն, երկա-

⁵⁸ Տե՛ս Բ. Սարգսյան, Պրիկ Խմաստասիրի «Աստուածաբանական քաղկեդոն» հայկական թարգմանութեան խնդիրն և...» («Բաղավաճ», 1894, էջ 328, ծան., հմտ. Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 193)։ «Շարակնոցի» թարգմանության մասին տե՛ս նաև Օ. Լ. Դաժդաժ, յարտուլի Դա Տոմեթուրի Լուծգրաժուրալու շրտուցրտոժա IX—X ևս-Մի, տժ, 1944, ցց. 017)։

⁵⁹ Ժ. Դաժդաժ, Մտաղցմեղոժոտի Մետուրի Ժցել յարտուլ ԼուծգրաժուրաՄի Դա Միսի Նևոտի («Երտուլժոժո...», Ժ. I, ցց. 185)։

⁶⁰ Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 189։

⁶¹ Այդ գրականության ցանկը տե՛ս նույն տեղում, էջ 224—262։

⁶² Մովսէսի Կադանկատուցույ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 239։

բնակ (հետագայում՝ ծաթ) հայերը իրավունք են ունեցել ժամասացությունը կատարել մայրենի լեզվով, բացառությամբ «սուրբ Աստուածի»՝ հայոց «որ խաչեցար» հավելման պատճառով: Այդ տեղեկությունը հավաստվում է նիկոն. Սեսարեցու «Տակտիկոնում» պահպանված (XI դ.) ս. Սիմեոնի վանահոր՝ Երուսաղեմի պատրիարքին հղված ուղերձի պատճենով⁶³: Հայկական աղբյուրներում ես ասվում է, որ ծաթերը «միայն լեզուով և գրով են հալք, և ալլով ամենայնիւ միարան ընդ նոյն յունաց և ամենայն գրոց նոցա. որպէս յայտ է այժմ ի Հոռոմոց տանէն մինչև ի Յոյնք և ի Կաֆա և ի յայլ տեղիս, որք բազումք կան ի նոցունց յամենայն տեղիս»⁶⁴: Ուրեմն, քաղկեդոնական ծիսական դրականություն կար հայերեն, և հայ-հոռոմները ժամասացությունը հիմնականում կատարում էին հայերենով, թեև հունարեն կամ վրացերեն կատարող առանձին բացառություններ ևս կարող էին լինել: Այստեղ տեղին է վկայակոչել Անիի վերաբերմամբ Ն. Մառի համոզիչ եզրակացությունը: «Естественно, грузинский язык не исключался в армянских халкедонитских церквях XIII в. Грузинские надписи той эпохи в крае (т. е. Шираке—П. М.) не все еще известны. Они находились не только на монастырских церквях, но и на других, рассеянных по области, культовых сооружениях. Грузинский язык, быть может, постепенно усиливался, позднее еще более усиливается в армянской халкедонитской церкви, но бесспорно, что армяне-халкедониты в церкви пользовались своею родной речью. В Ани, Шираке и прилежащих областях было значительное количество халкедонитских общин, тогда как грузинские надписи района чрезвычайно малочисленны»⁶⁵.

Վերևում առկոչված տվյալները, վարժում ենք, բավարար են եզրակացնելու համար, որ.

ա) Պղնձահանքը, իբրև վանական հաստատություն, գոյություն է ունեցել Իվանե Երկայնաբազուկի քաղկեդոնականություն ընդունելուց առաջ: Հիմնրվել է 1188 թ.:

բ) Աղբյուրների «վրացի վանք» արտահայտությունը իրականում մատնանշում է տեղի հայոց՝ վրացադավանությունը:

գ) Պղնձահանքի ծինամեծալու-առաջնորդը իր ենթակայության տակ ունեցել է Հյուսիսային Հայաստանի քաղկեդոնական հաստատությունները:

դ) Պղնձահանքը, հավանաբար, եղել է հայ-վրացական նշանավոր կրթօջախ, մատենագրական բեղմնավոր գործունեության ուշագրավ կենտրոն:

* * *

Պղնձահանք այցելած ճանապարհորդ-գիտնականները հիմնականում ըզրադվել են ս. Աստվածածին վանքի ճարտարապետական նկարագրությամբ,

⁶³ Н. Марр, Аркаун..., стр. 35, հմտ. Ն. Ադոնց, Ծաթ-Հայք («Հանդես ամսօրյա», 1912, էջ 267—271), (հղվածի ուղև. բնագիրը տե՛ս ЖМНПр., 1911, стр. 238—249), հմտ. П. Мурадян, Неопубликованная статья Н. Я. Марра об „Аркауне“, ЗУВЗ, ԳԱ «Տեղեկագիր», հաս. դիտ., 1964, № 12, էջ 55):

⁶⁴ Մ խ ի Թ ա Ր Ա պ ա Ր ա ն ե Յ ի, Աղանդատը հայք (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 553):

⁶⁵ Н. Марр, Ани, стр. 131—132.

բազմիցս կոչելով այն «եզակի», «սքանչելի», «հոյակապ» և այլն⁶⁶, Անցյալ դարի վերջերին Պղնձահանք է այցելել Աղ. Երիցյանը, որը մինչ այդ, ինչպես նշեցինք, համառոտ տեղեկանք էր տպագրել⁶⁷, Նա „при помощи профессора бумажной фабрики“ պատճենում է ս. Գեորգ մատուռի վրացերեն բավական ընդարձակ արձանագրությունը և հետագայում ի վերծանություն տալիս Ե. Թաղաշվիլուն⁶⁸, Վերջինս ընդօրինակության վրայից վերծանում է այն և առկցելով վրացերեն տապանագրերի ու մակագրությունների իր գրառումները⁶⁹, հրատարակում 1901 թ.⁷⁰ Որքանով մեզ հայտնի է, Պղնձահանքի արձանագրություններով ուրիշ մասնագետներ չեն զբաղվել: Տեղում աշխատելու ժամանակ համոզվեցինք, որ ընդօրինակության միջոցով վերծանելու պատճառով Ե. Թաղաշվիլու մոտ առանձին վրիպումներ են եղել: Ստորև տալիս ենք Պղնձահանքի հնությունների վրա պահպանված վրացերեն արձանագրությունների վերծանությունն ու հայերեն թարգմանությունը, անհրաժեշտ ծանոթագրումներով:

1. Աստվածածին վանք (տեղացիների հունարան հորչորջմամբ՝ Մեյրի վան): Որքան էլ զարմանալի է, վանքի սրբատաշ ու կատարելապես լավ պահպանված պատերի վրա արտաբուսա ոչ մի արձանագրություն չկա: Դժվար է պատկերացնել, որ ոչ վանքի հիմնադիր Կյուրիկյան արքայադուստրը, ոչ էլ Տաշիրի, Շիրակի և Արարատյան գավառներում հարյուրից ավելի արձանագրություն փորագրած Երկայնաբազուկները իրենց «առեալ ի հայոց» առաջնորդանիստ շինության վրա ոչինչ չեն գրել (գուցե այս պարագան որևէ բացատրություն ունի): Ներսից գրեթե ամբողջությամբ ծածկված է որմնանկարներով՝ աստվածաշնչական զանազան թեմաներով: Նրանց վրա կան բազմաթիվ վրացերեն մակագրություններ (աստվածաշնչական անձնանուններ, տեսարանների անվանակոչումներ և այլն): Գլխավոր մուտքի առաջ տապանաքարի վրա, որոնց վրա երբևէ տապանագրեր են եղել, բայց ժամանակի ընթացքում քայքայվել ու ջնջվել են⁷¹:

Ե. Թաղաշվիլու այցելության տարիներին ս. Աստվածածին վանքում եղել է վրացերեն արձանագրություն կրող մի խաչ, որ մեղ չհաջողվեց գտնել, Արձանագրությունը վերցնում ենք Ե. Թաղաշվիլու հրատարակությունից՝ բացելով հապավումները և վերականգնելով «աստմթավրուլի» գրությունը:

⁶⁶ Дм. Бакрадзе, Кавказ в древних памятниках христианства (Записки Общества любителей кавказской археологии. кн. I, Тифлис, 1875, стр. 34).

⁶⁷ А. Л. Ерицов, *նշվ. աշխ.*, էջ 20—24.

⁶⁸ Е. Такайшвили, *նշվ. աշխ.*, էջ 138.

⁶⁹ Պղնձահանքում Ե. Թաղաշվիլին եղել է 1894 թ., իր իսկ խոսքով՝ „всего на несколько часов“ (նույն տեղում):

⁷⁰ Նույն տեղում, էջ 138—145.

⁷¹ Թերևս այստեղ կլինեն թաղված Իվանի և Ավագ աթաբեկներ, որոնք իրավունք կունենային Հովհաննես Իմաստասերի պես տապանագրելու «արձանս այս սեմական է...»:

ՃԴ. ԿԴ
 ԴԽԾԵՆ. ԿԵ: ՈԵ:
 ԿԵ: ԴԵԴ. ՈԿԿ ԾԽԴ: Ծ
 ԾԴԵԴ ՆԿԾԽԿԹ

Ջ(Խար)օ թ(հիստե)օ. օ(ո)րդ(ա)ն
 օ(ըստ)օ Լ(մերտմա)ն, Ե(ոմեղմա)ն
 ցեց Պ(ա)րօ Ե(ո)լօ Ն(ա)յմ(ա)ր ԿԹ.

Թարգմանություն.— Խաչ Քրիստոսի: Իորդանին (=Հորդան(ան)ին) ողորմի աստված, որ այս անգործածական տեղը պիտանի դարձրեց:

Հորդանանը շինարարությամբ է պարապել նաև այլուր. Զուխտակ վանքի արձանագրությունից տեղեկացանք (տես ծան. 36), որ նա XIII դ. կեսերի գործիչ է: Նշանակում է խաչի վրայի սույն արձանագրությունը 1247 թ. մի երկու տարի առաջ կամ հետո է դրված: Խաչի այլուտ բերված լինելը որոշակի է⁷²:

2. ս. ՆՐՐՈՐԴՈՐԿԱՆ ԵԿԵԼԵԿԻ: Գտնվում է նախորդից հյուսիս-արևմուտք: Երկհարկ շինություն է, ավելի շուտ՝ երկու մասուռ, առաջինը նկուղային: Այստեղ, ճիշտ է նկատել Ն. Թաղաշվիլին, վրացական շատ արձանագրություններ են եղել: Նրանց մի մասը անցյալ դարի վերջին արդեն հողմնահարվել ու ոլորնչացել է: Վերին մասուռի նախագավթի մոտ եղել են բավական քանակությամբ տապանադրեր, որոնցից այժմ երկուսն են պահպանվել: Բարեբախտաբար այն ամենը, ինչ անցյալ դարի վերջերին տակավին պահպանված է եղել, Ն. Թաղաշվիլին ընդօրինակել է, որտեղից քաղելով և լրացնում ենք:

Նախագավթի կամարի վրա.

ՈՂԵԾԿՆ ԵԾԴԵ
 ԿԴԾ ԾԾԵԹ ԲԵԹ
 ԾԾԴԵԴԵԾ ԾԹԵԴ
 ԿԵԾԴԵԿԵԾԵԾ

Լ(ցո)նիստՅՆ Լ(ո)ցՅճ Կ(ա)ցո մ(ա)-
 մ(ա)նօ Պ(միղ)նօ Ե(ո)լօ(օ)լօնիս մօ-
 Նց Կ(ա)նլօլ(ա)յնիստ(յ)ն.

Թարգմանություն.— Ի սեր աստուծո՝ աղոթեցեք, սուրբ հայրեր, մեղապարս Մոսե (Մովսես) լուսաբարիս համար:

Տապանադրեր.

ԴԹԾԵԴՆ ԿԵ ՈԵ

օռանց Պ(ըստ)ն Լ(մերտմա)ն

Թարգմանություն.— Իօաննին (Հովհաննին) ողորմի աստված:

ԾԹԵԴՆ ԾԾԵԾ ԿԵ ՈԵ

մօնց մ(ո)մ(ղխար)նս Պ(ըստ-
 լօ)ն Լ(մերտմա)ն.

⁷² «Անգործածական տեղը պիտանի դարձրեց» արտահայտությունը Ն. Թաղաշվիլին բացատրում է այսպես՝ Իորդանը (Հորդանանը) մաքրել է տեղը և այնտեղ խաչ կանգնեցրել: Կարծում ենք, ավելի բնական կլիներ ենթադրել, որ նա խաչքարի շրջապատում եղած անմշակ հողը մշակելի է դարձրել կամ այնտեղ որևէ շինություն կառուցել:

Թարգմանություն.— Մովսես վարդապետին ողորմի աստված⁷³,

ԾՂԿՇԻՁՆՏ
ԲՂԿՆՆ ԿԻ
ՈՐ

ձեզանո՞հս եօյ(ոլո)հս Յ(ըսնդո)ն
լ(մերտմա)ն⁷⁴.

Թարգմանություն.— Նիկոլոզ (Նիկոլոս) սարկավազին ողորմի աստված:

ՆԺՁԻՆ
ԿԻ ՁՓՆՁ
ՈՁ

Ն(ո)մ(ը)ոհն Յ(ըսնդո)ն, շփ(ա)լո
լ(մերտ)ո.

Թարգմանություն.— Ողորմի Սիմեոնին, տե՛ր աստված⁷⁵,

եկեղեցու մեջ, խաչի վրա.

ԺԶԴԴ
ՇԺՇ
ԴԶԴԴ
ԿԴԶԺԴ
ԴԴԴ
ԿԻ
ՁՁ

ԿՆԴ
ՇԺԴ
ԺԶԴԴ
ԺԶԴԴ
ԺԶ ՆԴԴ
ՈՐՁ

ժլեց(ս)ք յ(հոստ)ոս. Եմա Եժ-
ցիլոս Եժցեցեցեցեցեց լ(մի)տրեց,
ց(հոր)ցիլոս և Ն(մի)ցիլոս Յ(ըսն-
դո)ն լ(մերտ)ո շ(ցալ)ո.

Թարգմանություն.— Հաղթություն (զորություն) քրիստոսի, սույն տեղիւր
կառուցողներ Դիմիտրիին, Դիմիտրիին Սիմեոնին ողորմի, տե՛ր աստված⁷⁶,

⁷³ Ե. Թաղալիլին Յովդոլարին (վարդապետ) Թարգմանիլ է «կրոնավոր» (святи-
ник): Ճիշտը վարդապետն է:

⁷⁴ Տապանագիրն այժմ պահպանվում է: Ե. Թաղալիլին կարդացել է ձեռնի նկոն:
Իրականում գրված է քերականական ճիշտ համաձայնությամբ, ինչպես մենք ենք վեր-
ծանել:

⁷⁵ Պղծված բառը գրված է ու-ով: Փակագրումը բացելիս վերականգնում ենք ՌՅ՝ Պ,
չկարծելով, թե դա բարբառային Պ>Ռ հնչյունափոխություն կլինի:

⁷⁶ Եժեղիս կառուցողներն արտահայտությունը, խաչի վրա լինելով, հաղթիլ թե եկեղեցուն
կամ մատուռին վերաբերի, թեև այդպիսի հնարավորությունը չի բացառվում: Դուք դա վերա-
բերում է խաչ կրող սեղանին, ավելի ճիշտ՝ պատվանդանին, որ նաղանկար և հայ-վրացական
ինքնատիպ ոճի շափաղանց ուղադրավ մի նմուշ է, արժանի արվեստագետների մասնավոր ուղա-
գրության:

Դժվարանում ենք որևէ բան ասել, թե այստեղ և է տապանագրում հիշվող Սիմեոնները ի՞նչ
հարաբերության մեջ են միմյանց հետ (արդյոք նույն անձնավորությունը չեն): Նրանցից որևէ
մեկը (զուգի երկուսն էլ) կարող է վերաբերել տեղիս ամենանշանավոր երախտավորներից մե-
կին՝ Սիմեոն Պղնձահանեցուն: Ուր հապավումը անկասկած լիցիլոսն է, և առաջին ու-ն
լի ենք կարգում նախորդ ծանոթության մեջ նշված պատճառով:

3. Ա. Կենդգ մատուտ. Վանքից հյուսիս-արևելք, սրբատաշ քարով կա-
ռուցված: Մուտքի վերևում կա վրացերեն ծավալուն արձանագրություն.

[illegible]

მე უღირსი და ს(უ)ლითა ს(ა)წყ(ა)ლ(ო)ბ(ღ)ლი¹ პ(ეტრ)ე ღირს ვიქმ(ენ) ალშენ(ე)ბ(ა)დ ეგუტრ(ი)სა | ამის ს(ა)ხ(ე)ლსა ზ(ედ)ა წ(მიდ)ათა მ(ო)ცი-
ქ(უ)ლთ(ა)სა სადი(დე)ბლ(ა)დ მ(ა)თდა და პ(ირვე)ლ პ(ა)ტრ(ო)ნთა და
გ(ა)მზრდ(ე)ლთა | ღ(ირს)თ(ა)თა² ჩ(ემ)თა ს(ა)მლ(ო)ცვ(ე)ლ(ა)დ³ და ს(უ)ლისა
ჩ(ემ)ისა ს(ა)ლ(ო)ც(ა)ვ—საკს(ე)ნ(ე)ბლ(ა)დ, და გ(ა)ნვ(ა)ჩინე ათ(ო)რმ(ე)ტთა
მ(ო)ცი(ა)ქ(უ)ლთა დღ(ე)ს(ა)სწ(ა)ლი[ს] | მეორე დღე. ვინცა ჩ(ემ)ისა გუ(ა)-
რ(ი)სა კ(ა)ცი იყ(ო)ს—მისისა ძლისაებრ ძმ(ა)თა გ(ა)მ(ი)კს(ე)ნ(ე)ბდეს და
იგი ჟამი წიზვებად⁴ და მე თქ(უ)ენთა ლ(ო)ცვ(ა)თა შ(ინ)ა მ(ო)მიკს(ე)-
ნ(ე)ბდ(ე)თ და უკ(უ)ეთუ ჩ(ემ)თა ც(ო)დვ(ა)თა მ(ი)ს(ა)გე[ზე]ლი მ(ო)მ(ა)გ(ო)ს
ლ(მერთმა)ნ, და ჩ(ემ)ისა გ(უა)რისა კ(ა)ცი აღაზავინ იყოს—თქ(უ)ენ ქ(რის-
ტ)ეს მ(ო)ყ(უა)რ(ე)ნო და მსგ(ავ)ს(ი)ნო⁵ მ(ამანო) წ(მიდანო) და ყ(ოველ)ნოვე
ძმ(ა)ნო, ვინცა პ(ა)ტრ(ო)ნ(ი)სა ავ(ა)გ ათ(ა)ბ(ა)გისა სამწირვ(ე)ლსა⁶ ჩ(ე)მ-
გნით ალშენ(ე)ბ(უ)ლსა ზ(ედ)ა ღირს [ი]ყ(ო)ს და აღიღოსთ პ(ირვე)ლ პ(ა)ტ-
რ(ო)ნთა და თქ(უ)ენ⁷, ჩ(ემ)იცა ს(უ)ლი მ(ა)ნვე იურგოს დაუკლ(ე)ბლ(ა)დ.
ჩ(ემ)ითა კ(ე)ლითა და ძმისწ(უ)ლისა ჩ(ემ)ისა ილ(ა)რ(იო)ნისითა აგუშენ(ე)-
ნ(ე)ბია⁸, და არა | ვინ გუჰმ(ა)რთლ(ე)ბის⁹ უკს(ე)ნ(ე)ბლ(ო)ბ(ა)სა. ესე ჩ(ე)მ-
გნით განჩენილი¹⁰ ანუ ჩ(უ)ენისა¹¹ გუარისა კ(ა)ცმ(ა)ნ ანუ ვინ სხ(უა)ჲ

մասին: Այստեղ կարող ենք ենթադրել, որ Պղնձահատնքում վանահայրութիւնը կամ առաջնորդութիւնը ժառանգական է եղել⁸⁰, ուստի Պետրեն, Գրիգոր Բակուրյանի պես, նախապես պարտավորեցնում է նրանց:

* * *

Թե ինչ վիճակում է եղել Պղնձաճանքը XV—XVII դդ. ոչինչ չգտեսներ: XVIII դ., վրաց Հերակլ II թագավորի օրոք, այստեղի ճանքերին կարևոր նշանակություն տրվեց, և թագավորը Պղնձաճանք վերաբնակեցրեց հույների՝ վերակենդանացավ նաև վանքը՝ իբրև ուղղափառների հոգևոր կենտրոն, Պ. Իսսելիանին թվարկում է, ինչ-ինչ աղբյուրներից իրեն հայտնի, Պղնձաճանքի վանահայր-եպիսկոպոսներին՝ XVIII—XIX դդ.⁸¹, Ստորև ներկայացնում ենք առ այսօր հայտնի առաջնորդների ցանկը:

1 Պետրե (հիշված հայկական և վրացական արձանագրություններում— 1245, 1247, 1242—1250)

2 Սիմեոն (աթճանադրության մեջ Ամոն ? , 1271—1289)

3 *Упфрп* (взятый в плен Омар-ханом и выкупленный ахалцхскими христианами от лезгин. Окончил жизнь в Иоанно-крестительской пустыне, в Тралезунде, под именем Вазело).

4 Գեղեկուն (մահ. 1792 թ.)

5 *ჩაღაშჩილი* (оставший свою кафедру в 1796 г. и повешенный в Ахалцихе за тайную переписку с русскими во время похода гр. Гудовича в Ахалцихе).

6 Հովհանն (Մահ. 1798 թ.)

7 *Чшрлш* (бывший впоследствии экзархом Грузии).

8 *Հովհաննիս* (родом из города Анкара, воспитанный в Кикойском монастыре на Кипре, и скончался в 1827 г.).

ГРУЗИНСКАЯ ЭПИГРАФИКА В АРМЕНИИ

П г ы н д з а њ а н к

П. М. МУРАДЯН

Резюме

Пгындзаһанк — важнейший центр халкедонитов в Северной Армении XIII в. Строительство храма, по сведениям армянских историков, было предпринято Иванэ Долгоруким, перешедшим к тому времени в лоно халкедонитов, а впоследствии и похороненного в Пгындзаһанке. Однако изучение эпиграфического материала показало, что храм был основан несколько раньше дочерью царя Кюрике Марией (Мариам) в

⁸⁰ ჯმთ. ე. ტაკაიშვილი, ზეც. შუბ., 59 143.

⁸¹ Տե՛ս Ս. Լ. Իոսելանի, նշվ. աշխ., էջ 32—33, հմտ. Ա. Երիցով, նշվ. աշխ., էջ 24, Պատմական տեղեկությունները քաղում է Վախուշտիից, կրկնելով նրա հիմնական վրիպումը՝ Պղնձահանքը նույնացնելով Ագարակի հետ, իսկ վերջինս՝ Յուր-տակի:

1188 г. Видимо термины *zhbhl* и *shishishhl* у Киракоса Гандзакского выступают как синонимы, означая «превратить, сделать», т. е. Иванэ превратил храм в халкедонский монастырь.

Изучению пгындзаһанкских древностей посвящено немало статей и очерков, преимущественно путевого характера. Имеющиеся здесь грузинские надписи в 1901 г. были изданы Е. С. Такайшвили, побывавшего на месте в 1894 г. и заставшего надписи, которые впоследствии были утрачены.

В предполагаемой публикации надписи вновь проверены и расшифрованы, снабжены необходимыми комментариями.